

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՀԱՅԿԱՆ ՄԵԾ ՏՕՆԸ ԵՒ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Բուքարեստում հրատարակող «Էնդէպանդաս Ռումէն» թերթը, խօսելով հայոց համազգային մեծ յորերեանի մասին, գրում է հետևեալը.

«Հայ գրերի գիտի 1500 ամեակի հանդէսները տեղի ունեցան մայրաքաղաքում (Պոլսում) և գաւառներում մեծ խանդավառութեամբ ու շուքով և տեղեցին երկու ցերեկ ու գիշեր: Ազգային զգացումը ուժգնօրէն արտայայտեց հայերի մէջ, որոնք այս յորերեանը տօնեցին սերտ միութեամբ: Ծեր ու երիտասարդ, կին և երիկայ միասին մասնակցում էին այս տօներին: Այս առթիւ կատարւած հանգանակութիւններից կարեւոր գումարներ գոյացան:

Այս տօները միևնոյն ժամանակ քաղաքական նշանակութիւն ունէին: Հայերն ուղեցին յայտարարել այսպիսով, որ իրենք իբրև ազգութիւն գոյութիւն ունեն, և այդ բանը կատարելագէտ աշողեց նրանց:

Հանգանակութեան արդիւնքը պիտի յատկացւի Հայաստանում դպրոցներ հիմնելու:

Արժէ յիշատակել ներքին գործերի մինիստր թալէաթ բէյի ձառը, որ արտասանեց հոժ քաղմութեան ներկայութեամբ: Մինիստրը պերճաստութեամբ և հաստատօրէն յայտարարեց թէ՛ «Այս երկիրը պիտի վերածնւի թուրքերի և հայերի միջոցով, հետևաբար մենք պէտք է ընթանանք ձեռք ձեռքի տւած»:

ՄԵԾ ՏՕՆԸ ԵՐՌՈՒՍԱՂԷՄԻ Ս. ՅԱԿՈՒԲԱՅ ՎԱՆՔՈՒՄ (Տանկահայ թերթերից)

Հոկտ. 13, կիրակի օր ի պատիւ 1500 և 400 ամեակներուն՝ ս. Յակոբայ Միաբանութիւնը եկեղեցական և զըպրոցական հանդէսներ սարքեց: Կիրակի առաւօտ եկեղեցին արտասովոր երեւոյթ մը ստացած էր, և բոլորովին ողորւած լոյսերու մէջ:

Առտուն հանդիսաւոր պատարագը բաւ Տ. Եղիշէ Զիլինիկրեան սրբազանը, որ իր քարոզին մէջ հակիրճօրէն բացատրեց բարեպաշտ հաւատացելոց հայ տառերու գիւտին և տպագրութեան նշանակութիւնները:

Ս. պատարագէն վերջ կատարեցաւ հոգեհանգիստի պաշտօնը, յետոյ ժառանգաւորաց վարժարանի տեսչութեան մասնաւոր հրաւերին վրայ, ամբողջ միաբանութիւնը մեծ թափօրով մը, գլխաւորութեամբ Զիլինիկրեան սրբազանի, առաջնորդեցան ղէպի դպրոցին մեծ դահլիճը: Թափօրը կազմւած էր տ. տ. Գաւիթ, Սարգիս, Շահան, Վըրթանէս, Սահակ վարդապետներէն, մաքրակրօն սարկաւազներէ և քաղաքացի երեւելի աշխարհականներէ:

Ներկայ էին բացի երկուս հանդիսականներէ ժառանգ. և Քաղաքացւոց սաներն ու սանուհիները: Նախագահ սրբազանին ազգարարութեան վրայ, հանդէսը բացեցաւ «Նմանեալ Մովսէսի» շարականով:

Աշակերտներու և աշակերտուհիներու կողմէ քանի մը ձառեր արտասանելէ յետոյ, բնմ բարձրացաւ ժառանգ. վարժարանի հայկարան ուսուցիչ Գրէֆ. Էյովէզեանը, որ թւեց հայ տպագրութեան և նշանագրերու վերաբերեալ ինչ ինչ կէտեր: Ընտրել վերջ սկսան երգելի երկձայն ու միաձայն երգեր առաջնորդութեամբ երաժշտապետ պ. Գէորգ Գասապեանի:

Երբ հանդէսը վերջացաւ, միևնոյն թափօրով հանդիսականները առաջնորդեցան ղէպի տեսչարան: Գերապատիւ տեսուչ հայր սուրբը, իբր յարգանք և նւէր մէյմէկ հատ 1914 տարւան օրացոյց նւիրեց եկող հայրերուն ու էֆէնտիներուն:

Ի յիշատակ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի, Բեթղէ՛մի մէջ դպրոց մը բացեցաւ Միաբանութեան նախաձեռնութեամբ, պիտի ընդունւին բոլորովին ծնողքէ զուրկ և անպաշտպան քաղաքացի, տեղացի մանուկներ: